

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Բնական գիտություններ

3, 2004

Естественные науки

**ԿԵՆՍԱՐԱՑՈՒԹՅՈՒՆ**

УДК 612.8+591.18

Ռ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ն. Ս. ՀԱԿՈԲՅԱՆ, Ն. ՅԱ. ԱՇԱՄՅԱՆ

**ԹԹՎԱԾՆԱՔԱՂՑԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԻՊՈԿԱՍՊԻ ԸԱԾՏԻ  
ԴԵՐԸ ԸՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**Ներածություն:** Թթվածնաքաղցի պայմաններում շնչառական նուրբ փոփոխություններն իրականանում են երկարավուն ուղեղի (կոճղեզային) շնչառական կենտրոնի և վերկոճղեզային գոյացությունների բարդ փոխազդեցության հետևանքով: Գրականության մեջ կան մի շարք աշխատանքներ, որոնք վերաբերում են երկարավուն ուղեղի շնչառական կենտրոնի գործառական վիճակի վրա լիմֆիական համակարգի կարևոր գոյացություններից մեկի՝ հիպոկամպի (ծովածիու) ԸԱ, դաշտի ազդեցությանը [օրինակ, 1, 2]:

**Ուսումնասիրության մեթոդիկան:** Ուսումնասիրությունները կատարվել են սուր փորձի պայմաններում 180–230գ քաշ ունեցող սպիտակ առնետների վրա, որոնք բնրեցվել են քլորալոզի (30մգ/կգ) և նեմբուտալի (10մգ/կգ) խառնուրդով: Ծովածիու ԸԱ, դաշտը էլեկտրախիբանվել է կոնստանտանե երկրեւ էլեկտրոդներով (տրամագիծը 0,2մմ, միջին էլեկտրոդային հեռավորությունը 0,2–0,3մմ), որոնց ստերեոտաքսիկ կողմնորոշումը կատարվել է զատ ֆիֆկովայի և Մարշալի ատլասի [3]:

Շնչառական նեյրոնների ակտիվության արտածման նպատակով ուղեղիկի մասնակի հեռացումից հետո միկրոէլեկտրոդը իշեցվել է երկարավուն ուղեղի շնչառական կենտրոնի (օքչ) շրջան: Արտաշնչական (էքսպիրատոր) և ներշնչական (հնապիրատոր) նեյրոնների տարրերակման, ինչպես նաև շնչառության ընդհանուր ռեակցիայի գնահատման նպատակով գրանցվել է կենդանու արտաքին շնչառությունը: Նեյրոնների իմպուլսային ակտիվության արտաքրջային գրանցումը իրականացվել է ապակյա միկրոէլեկտրոդներով:

Փորձերը կատարվել են թթվածնաքաղցի ազդեցության դիմամիկայում: Այդ նպատակով ստերեոտաքսիկ սարքավորմանը ֆիքսված կենդանին տեղադրվել է ճնշախցիկում: Ուսումնասիրվող ցուցանիշների գրանցումը կատարվել է գրգռումից առաջ և հետո. նորմօքսիայի պայմաններում՝  $pO_2=142\text{մմ սնդ. այ.}, 4000-5000\text{մ}^2$  «քարձրության» վրա՝  $pO_2=109-85\text{մմ սնդ. այ.}, 7500-8000\text{մ}^2$ ի վրա՝  $pO_2=64-58\text{մմ սնդ. այ.}$  և «փշեցումից» հետո՝ դարձյալ նորմօքսիայի պայմաններում:

**Ստացված տվյալների վիճակագրական մշակումը կատարվել է Ա. Օյվինի մեթոդով [4]:**

Գրանցվել է երկարավուն ուղեղի շնչառական կենտրոնի 40 փուլային նեյրոնների ակտիվություն, որոնցից 22-ը եղել են արտաշնչական, 18-ը՝ ներշնչական:

Ըստ ծովածիու CА, դաշտի գրգռման նկատմամբ պատասխան ունակցիաների նեյրոնները բաժանվել են երկու խմբի՝ ակտիվացող և արգելակվող: Եվ նորմօքսիայում, և բրվածնաքաղցի ազդեցության դինամիկայում արգելակվող նեյրոնների քանակությունը գերակշռել է ակտիվացվողների քանակին (աղ. 1):

#### Աղյուսակ 1

**Թրվածնաքաղցի պայմաններում ծովածիու CА, դաշտի էնկտրախրամման նկատմամբ  
երկարավուն ուղեղի շնչառական նեյրոնների քանակական փոփոխությունը**

| Փորձի<br>պայմանները          | Նեյրոնների սկզբանակը (%) | Արգելակվող<br>նեյրոններ (%) | Ակտիվացող<br>նեյրոններ (%) |
|------------------------------|--------------------------|-----------------------------|----------------------------|
| <b>արտաշնչական նեյրոններ</b> |                          |                             |                            |
| նորմա                        | 22 (100)                 | 14 (63,6)                   | 8 (36,4)                   |
| 4000–5000մ                   | 18 (81,8)                | 12 (66,7)                   | 6 (33,3)                   |
| 7500–8000մ                   | 13 (59)                  | 10 (76,9)                   | 3 (23,1)                   |
| «իջեցում»                    | 21 (95,4)                | 14 (66,6)                   | 7 (33,3)                   |
| <b>ներշնչական նեյրոններ</b>  |                          |                             |                            |
| նորմա                        | 18 (100)                 | 11 (61,1)                   | 7 (38,8)                   |
| 4000–5000մ                   | 15 (83,3)                | 10 (66,6)                   | 5 (33,3)                   |
| 7500–8000մ                   | 10 (55,5)                | 7 (70)                      | 3 (30)                     |
| «իջեցում»                    | 17 (94,4)                | 11 (64,7)                   | - 6 (35,3)                 |

Թրվածնաքաղցի ազդեցության դինամիկայում փուլային նեյրոնների քանակական փոփոխություններին զուգահեռ դիտվել են նաև այլ ցուցանիշների՝ համազարկի տևողության, իմպուլսների քանակի, հաճախության փոփոխություններ: Նորմալ մբնոլորտային ճնշման պայմաններում ծովածիու CА, դաշտի գրգռման ժամանակ արգելակվող արտաշնչական և ներշնչական նեյրոնների համազարկում նկատվել է իմպուլսների քանակի կրճատում, հետևաբար և իմպուլսների միջին հաճախության փոքրացում, իսկ ակտիվացվող նեյրոնների համազարկում՝ իմպուլսների քանակի ավելացում, հետևաբար և իմպուլսների միջին հաճախության մեծացում: Նեյրոնների իմպուլսային ակտիվության վրա ծովածիու CА, դաշտի արգելակվող ազդեցությունը գերակշռել է գրգռող ազդեցությանը: Աղյուսակ 2-ում ներկայացված է նորմայում և հիբօքսիայի ազդեցության դինամիկայում ծովածիու CА, դաշտի էլեկտրախրամման ժամանակ արտաշնչական և ներշնչական նեյրոնների իմպուլսային ակտիվության փոփոխությունը:

Թրվածնաքաղցի ազդեցության առաջին փուլում (4000–5000մ) рО<sub>2</sub>-ի իջեցումը հանգեցրել է շնչառական նեյրոնների ակտիվության բարձրացման: Այս փուլում դիտվել է արգելակվող և ակտիվացող նեյրոնների համազարկի տևողության փոքրացում, դրանցում իմպուլսների քանակի ավելացում, իմպուլսների միջին հաճախության մեծացում: Նման հեշտաց-

Ված ֆոնի վրա ծովածիու C<sub>A</sub>, դաշտի էլեկտրախթանումը առաջացրել է արտահայտված արգելակող ազդեցություն: Թթվածնաքաղցի ծանր փուլում (7500–8000մ) արտաշնչական և ներշնչական նեյրոնների համազարկում դիտվել է իմպուլսների քանակի խիստ նվազում: Նման ճնշված ֆոնի վրա C<sub>A</sub>, դաշտի էլեկտրախթանումը վերոհիշյալ նեյրոններին բնորոշ ռեակցիա չի առաջացրել:

## Աղյուսակ 2

**Թթվածնաքաղցի պայմաններում ծովածիու C<sub>A</sub>, դաշտի էլեկտրախթանման նկատմամբ երկարավում ուղեղի շնչառական նեյրոնների իմպուլսային ակտիվության փոփոխությունը**

| Փորձի<br>պայմանները          | Արգելակող նեյրոններ    |                   |       |                          | Ակտիվացող նեյրոններ    |                   |      |                          |
|------------------------------|------------------------|-------------------|-------|--------------------------|------------------------|-------------------|------|--------------------------|
|                              | հաճախություն,<br>իմպ/վ |                   | p     | փոփոխու-<br>թյունը,<br>% | հաճախություն,<br>իմպ/վ |                   | p    | փոփոխու-<br>թյունը,<br>% |
|                              | մինչ<br>գրգռումը       | գրգռումից<br>հետո |       |                          | մինչ<br>գրգռումը       | գրգռումից<br>հետո |      |                          |
| <b>արտաշնչական նեյրոններ</b> |                        |                   |       |                          |                        |                   |      |                          |
| նորմա                        | 42±3,1                 | 26±1,9            | 0,001 | 38                       | 31±2,3                 | 41±3,2            | 0,02 | 32                       |
| 4000–5000մ                   | 54±4,3                 | 30±2,3            | 0,001 | 44                       | 42±3,9                 | 57±4,3            | 0,02 | 36                       |
| 7500–8000մ                   | 24±1,9                 | 20±1,1            | 0,05  | 16                       | 21±1,8                 | 24±1,9            | 0,2  | 13                       |
| «իջեցում»                    | 43±3,3                 | 27±1,8            | 0,001 | 36                       | 32±2,9                 | 42±3,1            | 0,05 | 31                       |
| <b>ներշնչական նեյրոններ</b>  |                        |                   |       |                          |                        |                   |      |                          |
| նորմա                        | 46±3,9                 | 27±2,0            | 0,001 | 41                       | 45±3,9                 | 60±5,3            | 0,05 | 33                       |
| 4000–5000մ                   | 57±4,5                 | 30±2,7            | 0,001 | 47                       | 50±4,3                 | 70±5,7            | 0,01 | 40                       |
| 7500–8000մ                   | 26±1,7                 | 21±1,3            | 0,05  | 19                       | 30±2,1                 | 35±2,7            | 0,2  | 15                       |
| «իջեցում»                    | 45±4,1                 | 27±2,1            | 0,001 | 39                       | 43±3,3                 | 58±4,2            | 0,05 | 37                       |

Կենդանիներին «իջեցնելուց» հետո (նորմալ մթնոլորտային ճնշման պայմաններում) որոշ ժամանակ անց (15–20 րոպե) դիտվել է ինչպես ելակետային ցուցանիշների, այնպես էլ գրգռման նկատմամբ նեյրոնների ռեակցիաների վերականգնում (աղ. 2):

Եզրակացություն: Վերը նկարագրված փորձարարական տվյալները շնչառական նեյրոնների իմպուլսային ակտիվության վրա թթվածնաքաղցի և ծովածիու C<sub>A</sub>, դաշտի էլեկտրական գրգռման համակցված ազդեցության արդյունք են: Նման դեպքում թթվածնաքաղցի փուլերը ծառայել են որպես ֆոն, որի վրա հետո ավելացել է ծովածիու ազդեցությունը: Նորմօքսիայում ծովածիու C<sub>A</sub>, դաշտի գրգռման ժամանակ ստացված տվյալները հիպօքսիայի պայմաններում կատարվող փորձերի համար ծառայել են որպես ստուգիչ: Կենդանիների «գարձրացման» առաջին փուլում (4000–5000մ) շնչառական նեյրոնների ակտիվության բարձրացումը պայմանավորված է նյարդային բջիջների վրա ինչպես ուժիւկոր, այնպես էլ pO<sub>2</sub>-ի իջեցման անմիջական ազդեցությամբ և բջջային թաղանթների ապարևելուացմամբ [5, 6]: Երկրորդ փուլում (7500–8000մ) տեղի է ունենում շնչառական նեյրոնների ակտիվության ճնշում, որը կապված է բջջային թաղանթների կառուցվածքաֆունկցիոնալ կազմավորման, կալիում-նատրիո-

մական պոմախի ֆունկցիայի խանգարման, ինչպես նաև բջջային ացիդոզի գարգացման հետ [7]:

Ծնչառական նեյրոնների վրա ծովածիու ՏԱ<sub>1</sub> դաշտի բարդ ազդեցությունը կարելի է բացատրել նրանով, որ ծովածիու այդ հատվածում տարաբաշխված են ոչ միայն արգելակվող նեյրոններ (գերակշռող), այլև ակտիվացողներ:

Մեր նախկին ուսումնասիրություններում [8, 9] շնչառական նեյրոնների վրա լիմբիական համակարգի մյուս գոյացությունների՝ ենթատեսաթմբի, նշահամալիքի կեղևամիջային կորիզների ազդեցության ուսումնասիրման ժամանակ դիտվել է հակառակ երևույթ՝ ակտիվացող նեյրոնների քանակը գերակշռել է արգելակվողներին: Այստեղից հետևում է, որ շնչառության պրոցեսի կարգավորման մեխանիզմներում ընդգրկված են գիսուղեղի տարբեր մակարդակներում գտնվող գոյացություններ: Եվ միայն դրանց գումարային ազդեցությունը կարող է ապահովել շնչառության առավել հստակ կարգավորումը և օրգանիզմի հուսալի հարմարվողականությունը շրջապատող միջավայրի փոփոխվող պայմաններին:

*Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամրիոն*

*Ստացվել է 01.04.2004*

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Буклина С.Б., Филатова Ю.М., Элмана Ш.Ш. – Вопросы нейрохирургии, 1998, № 4, с. 1–7.
2. Коваль И.Н., Саркисов Г.Т., Гамбарян Л.С. Сенто-гиппокампальная система и организация поведения. Ер.: Изд-во АН Арм. ССР, 1986, 126 с.
3. Буреш Я., Петранъ М., Захар И. Электрофизиологические методы исследования. М.: ИЛ, 1962, 456 с.
4. Ойкин И.А. – Ж. патол. и экспер. терапии, 1960, т. 4, № 4, с. 76–85.
5. Власова И.Г. Нервная клетка и гипоксия. Матер. VII междунар. симпоз. «Эколого-физиологические проблемы адаптации». М., 1994, с. 54.
6. Лукиянова Л.Д. – Бюлл. экспер. биол. и медицины, 1997, т. 124 (9), с. 244–254.
7. Самойлов М.О. Реакция нейронов мозга на гипоксию. Л.: Наука, 1985, с. 190.
8. Карапетян М.А., Бакланаджян О.Г., Акопян Н.С. – Физиолог. ж. СССР, 1987, т.13, № 7, с. 926.
9. Акопян Н.С., Бакланаджян О.Г., Саркисян Н.В. – Физиолог. ж. СССР, 1991, т. 77, № 12, с. 41–48.

**Р. С. АРУΤՅՈՆՅԱՆ, Հ. Ս. ԱԿՈՊՅԱՆ, Ի. Յ. ԱԴԱՄՅԱՆ**

#### РОЛЬ СА<sub>1</sub> ПОЛЯ ГИППОКАМПА В РЕГУЛЯЦИИ ДЫХАНИЯ ПРИ ГИПОКСИИ

##### Резюме

В норме и в условиях кислородной недостаточности изучено влияние СА<sub>1</sub> поля гиппокампа на импульсную активность дыхательных нейронов продолговатого мозга. В условиях нормального атмосферного

давления до «подъема» животных электрическое раздражение CA<sub>1</sub> поля гиппокампа оказывало преимущественно тормозящее влияние. В начальной фазе гипоксии на «высоте» 4–5 тыс. м имела место активация частотного разряда нейронов. На этом фоне тормозящее влияние стимуляции CA<sub>1</sub> поля гиппокампа было более выражено, чем в условиях нормоксии. Во второй фазе (7,5–8 тыс. м) наблюдалось угнетение активности дыхательного центра продолговатого мозга и CA<sub>1</sub> поля гиппокампа. В условиях тяжелой гипоксии наблюдалось угнетение импульсной активности нейронов, при этом тормозящее влияние CA<sub>1</sub> поля гиппокампа было незначительным.

R. S. ARUTUNYAN, N. S. HAKOPYAN, N. J. ADAMYAN

THE CA<sub>1</sub> AREA OF HIPPOCAMPUS REACTION IN RESPIRATORY  
REGULATION IN HYPOXIA CONDITIONS

**Summary**

In the normal as well as in the oxygen deficiency conditions research has been made to study the influence of CA<sub>1</sub> area of hippocampus on impulse activity of respiratory neurons of medulla oblongata.

In conditions of normal atmospheric pressure the electrical stimulation of CA<sub>1</sub> area has had mainly inhibiting influence. In the initial phase, on 4–5 thousand meter altitude, activation of frequent discharge of neurons occurred. In this situation the inhibiting influence of stimulation of CA<sub>1</sub> area of hippocampus was more accentuated than in conditions of normoxia. In the second phase, 7,5–8 thousand meters on the reduction of the impulse activity of neurons, stimulation of CA<sub>1</sub> area induced uncharacteristic reactions of those neurons.